«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի պետ,
Ուստիկանության գնդապետ
Մ. Մուրադյան
«01» 06 2024 թ.

ԿԱՐԾԻՔ

Առաջատար կազմակերպության՝ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի՝ Արփինե Գեղամի Բիշարյանի՝ «Տեղական ինքնակառավարման սահմանադրականացումը եվրոպական իրավական չափորոշիչների համատեքստում. սահմանադրաիրավական պրակտիկայի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ակադեմիայի պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնը, մասնակցությամբ՝ իրավաբանական գիտությունների թեկնածու Ռ. Ռ. Մարանդյանի, Հ. Ա. Ստեփանյանի, Գ. Մ. Խուդոյանի, Ա. Գ. Սաֆարյանի և Ա. Ս. Մարգարյանի, քննարկեց Արփինե Գեղամի Բիշարյանի՝ «Տեղական ինքնակառավարման սահմանադրականացումը եվրոպական իրավական չափորոշիչների համատեքստում. սահմանադրաիրավական պրակտիկայի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ԺԲ.00.02- «Հանրային իրավունք» (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը և հանգեց հետևյալին:

Պետության և քաղաքացիական հասարակության քաղաքակիրթ փոխազդեցության խորապատկերում հասարակական գործերին քաղաքացիների մասնակցության իրավունքը համարվում է ժամանակակից պետությունների մեծ մասի ժողովրդավարական սկզբունքների կառուցողական անկյունաքարը, որի արդյունքում տեղական ինքնակառավարման հիմնախնդիրների ուսումնասիրումը

ձեռք է բերում առաջնահերթ նշանակություն: Ընդ որում, տեղական ինքնակառավարման մարմինների իրավական և փաստական ինքնուրույնությունը կրում է ինքնատիպ բնույթ և մեծ կարևորություն ինքնավարության չափորոշիչների ապահովման գործընթացում: Կարևորելով տեղական ինքնակառավարման ինստիտուտի դերակատարությունը ժողովրդավարական պետության կայացման ու զարգացման գործընթացում՝ հեղինակը սույն աշխատանքի շրջանակներում փորձել է իրականացնել համալիր գիտագործնական հետազոտություն՝ տեղական ինքնակառավարման համակարգի շարունակական զարգացման և հիմնախնդիրների լուծման համատեքստում:

Թեկնածուական ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, ութ ենթագլուխ պարունակող երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի այսպիսի կառուցվածքը, ընդհանուր առմամբ, համահունչ է այն խնդիրներին ու նպատակներին, որոնք իր առջև դրել է հեղինակը:

Աշխատանքի ներածության մեջ հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվում թեմայի գիտական մշակվածության աստիճանը, հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակն ու խնդիրները, տեսական և նորմատիվ հիմքերը, մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, ինչպես նաև՝ պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումը և աշխատանքի կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «Տեղական ինքնակառավարման հայեցակարգային մոտեցումները և կազմակերպահրավական հիմնահարցերը» վերտառությամբ գլխում հեղինակը անդրադարձել է տեղական ինքնակառավարման առաջացման հիմքերին, պատմականորեն ձևակերպված տեսություններին, ներկայացրել տեղական ինքնակառավարման հիմնական համակարգերը՝ իրավահամեմատական վերլուծության ենթարկելով առկա համակարգերի ընդհանուր միտումները:

Աշխատանքի երկրորդ գլխում, որը կրում է «Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման սահմանադրականացման գործընթացի առանձնահատկությունները եվրոպական իրավական չափորոշիչների համատեքստում» խորագիրը, լուսաբանված են Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման համակարգի ներդրման գործընթացը և զարգացման միտումները Տեղական ինքնակառավարման խարտիայի լույսի ներքո, ինչպես նաև տեղական ինքնակառավարման կազմակերպման առանձնահատկությունները ու իրավական հիմքերը:

«Տեղական ինքնակառավարման արդիականացման միտումները Հայաստանի Հանրապետությունում» խորագրով երրորդ գլխում հեղինակը ներկայացրել է մասնակցային ժողովրդավարության ապահովման իրավական հիմքերը տեղական ինքնակառավարման համակարգում, նաև քննարկել է համայնքների միավորման առանձնահատկությունները պետական քաղաքականության արդիականացման պայմաններում:

Ատենախոսության եզրափակիչ մասում շարադրված են հետազոտության կատարման արդյունքում հեղինակի կողմից արված եզրահանգումները:

Գիտական հետազոտության վերաբերյալ ընդհանուր դրական կարծիքի հետ մեկտեղ հարկ ենք համարում ներկայացնել հետևյալ նկատառումները՝

1. Հստակության տեսանկյունից վիճահարույց է պաշտպանության ներկայացվող առաջին դրույթի ա) ենթակետը, որտեղ հեղինակը որպես գործունեության կազմակերպման ձև անդրադարձ է կատարում տեղական ինքնակառավարմանը՝ զուգակցելով պետական կառավարման հետ: Մեր կարծիքով աշխատանքը կշահեր, եթե վկայակոչված զուգակցումը դիտարկվեր հանրային իշխանության համատեքստում՝ նախանշելով կենտրոնական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների համախումբը «մունիցիպալ իշխանությունը քաղաքականությունից դուրս» դոկտրինի շրջանակներում:

2. Գիտական նորույթի տեսանկյունից վիճահարույց է պաշտպանության ներկայացվող յոթերորդ դրույթը: Հեղինակը ուշադրություն է հրավիրում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 189-րդ և 190-րդ հոդվածների համատեքստում վարչատարածքային փոփոխություններով պայմանավորված համայնքների միավորման նորամուծության ծրագրին: Հարկ է նկատել, որ դեռևս 2011թվականի նոյեմբերի 10-ին Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից արդեն իսկ հավանության է արժանացել «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգը»: Այնուհետև, համայնքների խոշորացման գործընթացն ամրագրվել է նաև այլ փաստաթղթերում, մասնավորաբար Հայաստանի Հանրապետության Կառավարության տարեկան ծրագրերում, Կայուն զարգացման ծրագրում, Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում, որի հիման վրա 2015 թվականին սկսվել և հաջորդաբար շարունակվել է համայնքների խոշորացման գործընթացը: Չթերագնահատելով ատենախոսի կողմից իրականացված հետազոտության արժեքը, այնուամենայնիվ, կարծում ենք, որ վերոհիշյալ մոտեցումը չի պարունակում գիտական նորույթի էական տարրեր: Բացի այդ, կարծում ենք, որ նպատակահարմար է գիտական հետազոտության շրջանակներում պահպանել բառաօգտագործման միատեսակությունը՝ կապված «համայնքների միավորում» և «համայնքների խոշորացում» բառաարտահայտությունների հետ, որն էլ իր հերթին կբացառի շփոթությունը՝ ապահովելով մեկնաբանությունների հստակությունն և որոշակիությունը:

3. Թերի է ատենախոսության գրականության ցանկի ձևավորումը: Մասնավորապես, ատենախոսության՝ «Նորմատիվ իրավական ակտեր և միջազգային փաստաթղթեր» բաժնում ամբողջական ներկայացված չեն իրավական ակտերի համարները, ՀՀ պաշտոնական ակտերի տեղեկագրի հերթական և ընդհանուր համարները, որտեղ այն տպագրվել է և նշված տեղեկագրում հոդվածի համարը, իսկ «Մասնագիտական գրականություն» բաժնում ներառված ոչ բոլոր աղբյուրների դեպքում են նշված դրանց էջերի ընդհանուր քանակի վերաբերյալ տվյալները:

Ներկայացված նկատառումները կրում են մասնավոր բնույթ և չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը, պայմանավորված են աշխատանքն առավել որակյալ տեսնելու ցանկությամբ:

Հետևություն. «Տեղական ինքնակառավարման սահմանադրականացումը եվրոպական իրավական չափորոշիչների համատեքստում. սահմանադրաիրավական պրակտիկայի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը գիտական նորույթ պարունակող, ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք է, որը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թ. օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ով նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը՝ Արփինե Գեղամի Բիշարյանը, արժանի է իր կողմից հայցվող իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին՝ ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ:

Առաջատար կազմակերպության կարծիքը Արփինե Գեղամի Բիշարյանի՝ «Տեղական ինքնակառավարման սահմանադրականացումը Եվրոպական իրավական չափորոշիչների համատեքստում. սահմանադրաիրավական պրակտիկայի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում» խորագրով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ պատրաստվել է Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի պետի պարտականությունների ժամանակավոր կատարող, ոստիկանության փոխգնդապետ Ա. Գ. Սաֆարյանի կողմից:

Քննարկվել և հավանության է արժանացել պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի 2024 թ. հունիսի 7-ի նիստում, արձանագրություն թիվ 12:

Ամբիոնի պետի պարտականությունների ժամանակավոր
կատարող, ոստիկանության փոխգնդապետ Ա. Գ. Սաֆարյան

Ա. Գ. Սաֆարյանի ստորագրությունը հաստատում եմ:

ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրի պետի
տեղակալ, ինքը և կադրերի և ԱՀՏԱ բաժնի պետ,
ոստիկանության գնդապետ Գ. Մալխասյան